Կարծիք

Արեգ Վարդանյանի «Քաղաքական գաղափարները Հայաստանում (XI դարի երկրորդ կեսից - XIII դար)» թեմայով Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Արդի հայագիտության մեջ սակավաթիվ են միջնադարի, ինչու չէ՝ նաև պատմական մյուս ժամանակափուլերի քաղաքական գաղափարախոսությունների քննությանը նվիրված ուսումնասիրությունները: Հայոց միջնադարին վերաբերող այդպիսի աշխատություններից մինչև այժմ անգերազանցելի է մնում Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» կոթողային երկհատորյակը, որն այդպիսին, կարծում ենք, կմնա դեռ երկար ժամանակ: Այդուամենայնիվ, հատկապես վերջին շրջանում միջազգային գիտական համագործակցության ընդլայնման, ինչպես նաև պատմագիտական արդի հետազոտությունների՝ հասանելի դառնալու արդյունքում հայաստանյան գիտական միջավայրում նկատվում է զգալի տեղաշարժ անցյալի պատմությունը ժամանակի հասարակական-քաղաքական գաղափարախոսությունների պրիզմայով դիտարկելու առումով: Այդ ուսումնասիրությունների շարքին կարելի է դասել նաև պաշտպանության ներկայացված ատենախոսությունը՝ իբրև պատմական իրադարձությունները, պատկերավոր ասած, գաղափարական շղթայով շաղկապելու հաղոջված փորձ: Ինչու ենք շեշտում հատկապես միջազգային գիտական համագործակցությունը, միջազգային հրատարակությունների ազդեցությունը, քանի որ դրանք օգնում են լրացնել գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանության այն բացը, որ կա մեզանում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երու գլխից, եզրակացություններից ու օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից:

Առաջին գլխում՝ «Քաղաքական գաղափարների զարգացման պատմահասարակական միջավայրը և մատենագրական դրսևորումները», հանգամանորեն քննության են առնվել Բագրատունյաց թագավորության մասնատման ու անկման պատճառները, դրանց ազդեցությունը հասարակական-քաղաքական գաղափարների ձևավորման ու փոխակերպման վրա: Ուշադրության է արժանի ատենախոսի պնդումն առ այն, որ Բագրատունյաց թագավորության մասնատման պատճառներից էր կառավարող քաղաքական վերնախավի, հատկապես թագավորական տոհմի տանուտիրական աշխարհայացքը, որը բնորոշ էր նաև ժամանակի նախարարական տներին: Իրավացի է հեղինակը՝ պնդելով, որ թագավորական կենտրոնաձիգ իշխանության ստեղծմանը մեծապես նպաստում էր գործակալության համակարգը, որը, փաստորեն, տեղ չգտավ Բագրատունյաց

Հայաստանում: Ասվածը կարելի է հաստատել Կիլիկիայի հայկական պետության օրինակով, որի կառավարման համակարգում զգալի տեղ էր հատկացվել գործակալություններին:

Քաղաքական մասնատվածությունը լավագույնս արտահայտվեց նաև մատենագրական երկերում, հատկապես՝ պատմագրական, որի նշանավոր հուշարձանները նվիրված էին ինչպես Բագրատունիների, այնպես էլ՝ իշխանական տների պատմությանը: Պատմական նույն իրադարձությանն իշխանական պատմիչները տալիս են հաճախ համակետ գնահատականներ՝ առաջնորդվելով սեփական տոհմի կամ պատվիրատուի քաղաքական շահերով: Ասվածի վառ օրինակ է Ստեփանոս Օրբերլյանի «Ողբ»-ը, որում իրավացիորեն քննադատվում է Վասպուրականի թագավորության հիմնումը, իբրև Բագրատունյաց թագավորության մասնատման պատճառ, մինչդեռ հաջորդիվ փառաբանվում է Սյունյաց թագավորության ստեղծումը, որը, պակաս ազդեցություն չունեցավ Հայոց թագավորության թուլացման գործում: Արձանագրելի է, որ այս հարցերը հանգամանորեն քննվել են ատենախոսության առաջին գլխում: Հետաքրքրական են նաև նույն գլխում Կիլիկիայի հայկական պետության ստեղծման պատճառների տարանջատումը գաղափարականի և ընկերբանականի, որոնցից վերջինը, ըստ ամենայնի, նոր խոսքը է այդ թեմային վերաբերող տեսակետների շարքում:

Առաջին գլուխը եզրափակում է «Քաղաքական գաղափարների զարգացման մատենագրական միջավայրը. ողբատեսիալային մտածողություն և թագավորության վերականգնման գաղափար» ենթագլուխը, որը, մեր կարծիքով, ատենախոսության ամենահաջողված մասերից է: Սույն ենթագլխում տեղ գտած եզրահանգումներից ուշադրության է արժանի այն, որ ազատագրական լեգենդի վաղմիջնադարյան տաբերակներում չի դրվել օտարին ապավինելու պահանջ, ինչը, արդեն 11-րդ դարի քաղաքական նոր իրապայմանների բերում մտել է շրջանառության մեջ՝ դառնալով ազատագրական պայքարի գաղափարախոսության առանցքային կետերից մեկը:

Երկրորդ գլխում՝ «XI-XIII առանցքային քաղաքական գաղափարների քննություն», հանգամանորեն ներկայացված են ժամանակի թագավորական ու իշխանական տների ծագումնաբանական առասպելները, վեր են հանված դրանց քաղաքական ենթահողը, կապը թագավորության վերականգնման գաղափարի, իշխանական հավակնությունների հետ: Սույն գլխում աղբյուրներից բերված բազմաթիվ քաղվածո մեջբերումներով վեր են հանվել իշխանավորի կերպարը, ավելի ստույգ՝ կատարելատիպը, կառավարչից ակնկալվող որակները, ըստ այդմ՝ նաև համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին:

Ատենախոսությունն ունի սկզբնաղբյուրային լայն հենք՝ ժանրային բազմազնությամբ, ինչը նրա կարևոր առավելություններից է, շարադրված է մասնագիտական գրականության պատշաճ օգտագործմամբ: Եզրակացությունները, որոշ դեպքերում՝ համարձակ, բխում են քննության բովանդակությունից:

Ատենախոսությունը գիտական նորույթ է և կարող է օգտակար լինել Հայոց միջանադարի քաղաքական գաղափարախոսությունների քննության համար:

Կարևորելով հանդերձ կատարված ծավալուն աշխատանքը՝ ցանկանում ենք ներկայացնել որոշ դիտողություններ ատենախոսության մեջ տեղ գտած տեսակետների ու եզրահանգումների վերաբերյալ:

Այսպես,

1. Ներածության մեջ ատենախոսը գրում է, որ Քեմբրիջի և Բիելեֆելդի դպրոցների մեթոդաբանությունը կիրառելի չէ քննության առարկա հարցերի ուսումնասիրման համար: Կարծում ենք, որ այս պնդումը կարիք ունի լրացուցիչ փաստարկման, այդ դպրոցների մշակած որևէ մեթոդի փորձարկման, քանզի հակառակ պարագայում այն կարող է համարվել ապրիորի տեսակետ:
2. Աղբյուրների տեսության փոխարեն ներածության մեջ հանդիպում ենք դրանց գրեթե սոսկական թվարկման: Կարծում ենք, որ հարկ էր աղբյուրները խմբավորել, գուցե՝ ժանրային առանձնահատկությունները հաշվի առնելով: Սկզբնաղբյուրների ու մասանգիտական ուսումնասիրությունների վերաբերյալ հեղինակի դիրքորոշումը, գնահատականը սույն թեմայի քննության տեսանկյունից մեծապես կբարձրացնեին ատենախոսության գիտական արժեքը:
3. Վաստակաշատ հայագետ Հայրապետ Մարգարյանի հիմնարար ուսումնասիրությունները, դրանցում տեղ գտած առավել քան ուշագրավ տեսակետներն իշխանական տոհմերի ծագման առասպելի վրա խորենացիական ազդեցության մասին բավարար չափով չեն դիտարկվել ատենախոսության մեջ:
4. Էջ 24-25-ում գրված է. «Ասվածին կարելի է գումարել այն հանգամանքը, որ XI դարասկզբին Հաղպատը և Սանահինը թափ ստացան իբրև կարևոր վարդապետարաններ, ինչի արդյունքում հանդես եկան Դեռոսկորոս հակաթոռ կաթողիկոսը և գործուն վարդապետներ Հակոբ և Անանիա Սանահնեցիները: Նշենքնան, որ Դավիթ Անհողինի որդին՝ Կյուրիկեն նախաձեռնեց կաթողիկոսության վերականգնումն Անիում»: Նշված իրադարձությունները մեկ պարբերության մեջ ներկայացնելը թույլ է տալիս կարծել, որ ատենախոսը դրանք դիտարկել է տրամաբանական շղթայի մեջ, այն դեպքում, որ վարդապետարանների հիմնումն ու զարգացումը, Դեռոսկորոսի՝ կաթողիկոսական իշխանությունը զբաղեցնելը և Բարսեղ Անեցու կաթողիկոսական ձեռնադրությունը 1081 թ. իրարից տարանջատ և որոշ դեպքերում դիպվածային իարադարձություններ են:
5. Բագրատունյաց թագավորության անկման պատճառները քննելիս բավարար չափով անդրադարձ չի կատարվել Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությանը:
6. Առաջին գլխում վանականությանն ու վաճառականներին վերաբերող երկու ծավալուն թեմաները, կարծես, չեն ձուլվում տվալ գլխի ընդհանուր շարադրանքին՝

թողնելով ատենախոսության այդ հատվածում արհեստականորեն մուծված լինելու տպավորություն:

7. Կարծիքն այն մասին (էջ 29, ծանոթ. 119), որ Հայոց Եզր Փառաժնակերտցի և Ներսես Գ Տայեցի կաթողիկոսները քաղկեդոնական տարրեր են ներմուծել Հայոց եկեղեցի, հիմնավոր չէ: Չնայած այսօր արդեն հրապարակված մի քանի հիմնարար ուսումնասիրություններին, դեռ շարունակում են տարածվել պնդումներ առ այն, որ այս կաթողիկոսները քաղկեդոնական տարրեր են մուծել Հայոց եկեղեցի, այն պարագայում, որ նրանք եղել են միակամական վարդապետության հետևորդներ:

8. Վեստ Սարգսի թագավորական հավակնություններին անդրադառնալիս հեղինակի չի օգտագործել Կարեն Մաթևոսյանի՝ այդ խնդրին վերաբերող շահեկան ուսումնասիրությունը (Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երևան, 2015, էջ 114-120):

9. Պետրոս Ա Գետադարձի վերաբերյալ Արիստակես Լաստիվերտցու դիրքորոշումը ներկայացնելիս հարկ է նշել պատմիչի՝ կաթողիկոսին տված հայտնի բնորոշումը՝ հույժ գանձասեր լինելը, ինչը մեծ դեր է կատարել Անին հանձնելու հարցում և օգնում է բացահայտել նրա գործունեությունը որոշ դրվագներ:

10. Կիլիկիայում հայկական պետականության վերականգնման պատճառները քննելիս չի օգտագործվել երջանկահիշատակ պատմաբան Գագիկ Հարությունյանի՝ («Դիտողություններ Կիլիկիայում հայկական պետականության առաջացման հարցի շուրջ» Հայոց պատմության հարցեր, հ. 6, 2005, էջ 216-247) խիստ շահեկան հոդվածը, որտեղ հանգամանորեն քննության են առնված հայկական թագավորության ստեղծման նախադրյալներն ու պատճառները, որոնք տեղ են գտել նաև սույն ատենախոսության մեջ:

11. Աղթամարի կաթողիկոսության ստեղծմանն անդրադառնալիս հեղինակը գրում է, որ այդպիսով տեղի է ունեցել քաղաքական իշխանության հոգևորացում: Նախ, հարկ է նշել, որ Աղթամարի կաթողիկոսությունը հիմնվել է որոշակի դիպվածի պայմաններում. Բարսեղ Ա Անցեուն պատուհասած դժբախտ պատահարն էր պատճառը, որ ստիպեց նրան տակավին տասնհինգամյա Գրիգորին ձեռնադրել կաթողիկոս, ինչն էլ դարձավ Դավիթ Աղթամարցու անհնազանդության պատճառը: Նկատենք նաև, որ Աղթամարի կաթողիկոսության ստեղծումը ոչ այնքան քաղաքական իշխանության հոգևորացում էր, որքան նույն տոհմի ձեռքում երկու իշխանությունների համատեղում, այլ կերպ՝ պարոնտերության հիմնում: Ատենախոսության մեջ պարոնտերության ինստիտուտը, զարմանալիորեն, չի քննվել:

12. Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Գ-ի վերաբերյալ հիշատակարաններից վկայակոչված բացասական բնորոշումներն արդյոք պատճառաբանվա՞ծ են: Իշխանավորներին տրված բազմաթիվ բնորոշումներ են քաղվածաբար բերված, որոնք, իհարկե, օգնում են ինչ-որ չափով բացահայտել նրանց կատարելատիպը: Սակայն խնդրի համակողմանի քննության առումով խիստ կարևոր է պարզել այդ բնորոշումների օբյեկտիվությունը, կամ՝ իշխանավորներին այդպես հատկանշելու

դրդապատճառները: Եթե ասվում է, որ իշխանը պատերազմասեր է՝ արդյոք դա ստո՞ւյգ է, թե՞ հերթական մակդիրն է, որ մեր մատենագիրները շռայլել են իրենց հայրենի իշխանավորներին:

13. Պնդումն առ այն, որ Մխիթար Գոշը պատրաստ էր ընդունել Զաքարե Զաքարյանի առաջարկած նորամուծությունները, հիմնավոր չէ: Խոսքը վերաբերում է Սսի՝ 13-րդ դարասկզբի եկեղեցական ժողովի կանոններին, որոնք ընդունվել և Հայաստան էին ուղարկվել ոչ թե Զաքարեի, այլ՝ Լևոն Ա-ի նախաձեռնությամբ՝ Անտիոքի գահաժառանգության պայքարում Հռոմի պապի օժանդակությունը շահելու նպատակով: Հարկ է նկատել, որ Գոշն իր՝ «Թուղթ առ վրացիսն» մեծարժեք երկում անդրադարձել է Սսի ժողովի որոշ կանոնների, և դատելով նրա դիրքորոշումից, դեմ է եղել դրանցից անվերապահ ընդունմանը:

14. Հասարակական և քաղաքական կյանքում վարդապետների դերին և ազդեցությանն անդրադառնալիս շահեկան կլիներ օգտագործել Վարդան Այգեկցու՝ «Ով է իշխան դատել» առակը, որը լավագույնս ներկայացնում է նրանց դերն ու ազդեցությունը եկեղեցական կյանքում:

Ի մի բերելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ Արեգ Վարդանյանի «Քաղաքական գաղափարները Հայաստանում (XI դարի երկրորդ կեսից - XIII դար)» թեմայով ատենախոսությունն առաջադրված հիմնախնդիրների շահեկան ու համակողմանի քննություն է: Սեղմագիրն արտահայտում է ատենախոսության բովանդակությունը: Նշված դիտողությունները չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը: Ատենախոսությունը համապատասխանում է ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Միջին դարերի պատմության» բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Վահե Թորոսյան

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Միջին դարերի պատմության» բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Վահե Թորոսյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական քարտուղար, պ.գ.թ. Հակոբ Մուրադյան

17.06.2025